

ճառը այս կերեւելի որ աղջկան պարտքերէն մէկը լինելով աչքաբացութիւն, մաքրասիրութիւն ու աշխատասիրութիւն, երբ որ ոտքին տակը ըզունկի կսորուանք հանգիպին ու ինքը կամ թմրածութենէն, կամ անհագութենէն եւ կամ ծուլութենէն՝ անփոյթ լինի աւելլու կամ վերցնելու, հարկաւ ուրիշ բաներու մէջ եւս յայտնի կընէ այդ իւր մեծամեծ պակասութիւնները, եւ տունը կմնայ՝ ոչ միայն եօթը տարի, այլ եւ գուցէ բոլոր կենացը մէջ:

Ե. Ըզունկը այրելը գէշ է կըսեն: Ի հարկէ. գէշ գէշ հոտեր կհանէ, անոր համար պէտք է այրել: — Բայց սարսափելի անգթութիւն ու անիրաւ բան է՛ ռամկաց հանած հետեւանքը, որ կըսեն թէ ըզունկը այրող մարդուն ըզունկները *անկեղ* (այսինքն ի հանդերձեալն) կապահանջեն, ու թէ որ չգտնուի՝ ըզունկին տիրոջը կէրեն:

Զ. Կտրուած ըզունկներն ինչ ընելու է: — Պատի տակ թաղելու է: — Ինչո՞ւ համար: — Մեր գիտցածը, անոր համար ոտքի տակ չերթան ու քաղողին նեղութիւն չտան, զգուանք չպատճառեն: Իսկ ռամիկները կարծեն թէ դատաստանին օրը մարդուս ըզունկները պիտի ուզուին, անպատճառ գտնելու է: Այս անտանելի գեթուարութենէն ու տագ-

նապէն ազատ մնալու համար՝ պէտք է յիշէք իստոնեան որ դատաստանին օրը մարդէս պահանջուելիքները իրեն բարի կամ չար գործքերն են, եւ ոչ թէ մաղերն ու ըզունկները:

Է. Ըզունկին վրայ նորիկ (այսինքն ճերմակ բիծ) ունենալը ինչ բանի նշան է: — Մեր ռամիկները կըսեն թէ նորիկը նշան է նոր հագուստ հագնելու. բայց սրչափ տղայք եւ աղքատներ կան որ տարին տասը նորիկ կունենան ու մէկ նոր հագուստ մը չեն հանիր: Ուրեմն նորիկը նշան մը չէ, այլ ըզունկի ոսկորին կաղմուածքին մէջ գիպուածաւ կան փոփոխութիւն:

Ը. Իրան է այն խօսքն որ կըսեն թէ որուն որ ըզունկը մտին մօտիկ ու կպած է, անոր ազգականի սէրը շատ կլինի: — Այս բնախօսական կամ խտրադիմական նշանը ստուգելու համար շատ դիտողութիւն հարկաւոր է, զոր մէք չեմք բրած, եւ ուրիշներուն կթողումք: Միայն թէ անհիմն չէ այն խրատը զոր կուտան Արաբացիք այս առակաւոր խօսքովս թէ «Ըզունկին ու մըտին մէջտեղը միմտներ, կեղեւին ու ծառին մէջտեղը միմտներ». այսինքն ազգականաց կռիւներուն մի խառնուիր որ խաղք չլինիս եւ կամ ի զուր չաշխատիս:

ԱՌ ԶԱՐԱԽՈՍԵԱՆՆ .

Առաքիցիդ թէ եւ կըրնաս՝
Հարկ չէ բընաւ որ ջանաս
Լըռեցընել քո թըշնամից
Սաստիւ բըռնի կամ ուժգին,
Գործըդ խօսի ազնիւ կերպով,
Կըլըռէ չարըն շուտով,
Գուցէ պարսաւն ալ գովութեան
Փոխուի վաղ կամ անագան: